# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
## Դիմումնա ֆիր Սոցիալական Ապահովության քարտի

### Սոցիալական Ապահովության քարտի դիմելը հեշտ է <u>ԵՒ</u> անվճար

## ԱՅՍ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՍՏԱՆԱԼՈՒ՝

- **Բնա ֆիր** Սոցիալական Ապահովության քարտ
- **Կրկնօրինակ** Սոցիալական Ապահովության քարտ
- **Սրբա ֆված** Սոցիալական Ապահովության քարտ

**ԿԱՐԵՒՈՐ.** Դուք ՊԵՏՔ է ներկայացնեք պահանջվող բոլոր փաստաթղթերը, որպեսզի մենք ձեր դիմումնագիրը ընդունենք: Ուշադրությամբ հետեւեցեք ներքեւի ցուցմունքներին, որպեսզի մեզ ներկայացնեք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ու ապացույցները:

**ՔԱՅԼ 1** Կարդացեք այս ցուցմունքի էջերը, որոնք բացատրում են դիմումնագրի ճշգրիտ լրացնումը, թելադրում պետք եղած փաստաթղթերի մասին եւ դիմումնագրի ներկայացնելու ձեւերը:

**ՔԱՅԼ 2** Լրացրեք եւ ստորագրեք դիմումնագիրը՝ գործածելով ԿԱՊՈՒՅՏ կամ ՍԵՒ գրիչ: Մատիտ կամ ուրիշ գույնի գրիչ մի գործածեք: Խնդրվում է հստակ գրեք: Եթէ տպում եք այս դիմումնագիրը մեր կայքէջից, պետք է գործածեք 8 ½" x 11" սպիտակ թուղթ (եթէ օտար երկրում ապրում եք եւ չեք կարող 8 ½" x 11" թուղթ գտնել, կարող եք գործածել A4 (8.25" x 11.7") որն միյակ այլ ընդունելի թուղթն է):

**ՔԱՅԼ 3** Լրացված եւ ստորագրված դիմումնագիրը, պահանջվող բոլոր փաստաթղթերի հետ, ներկայացրեք ոեւէ Սոցիալական Ապահովության գրասենյակ:

## ՊԱՇՏՊԱՆԵՑԵՔ ՁԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐՆ ՈՒ ՔԱՐՏԸ

Պաշտպանեցեք ձեր Սոցիալական Ապահովության քարտն ու համարը կորուստից եւ գողությունից: Ձեր հետ **ՄԻ ԿՐԵՔ** այն: Ապահով տեղում պահեցեք եւ ցույց տվեք այն միայն ձեր նոր գործատիրոջ, դրամանատան հաստատության երբ նոր հաշիւ բանաք, կամ Ամերիկյան գործակալություններից նպաստներ ապահովելու ժամանակ: **ՉԱՐՏՕՆԵՔ** որ ուրիշներ ձեր համարը օգտագործեն իբրեւ իրենց սեփական համար:

## ԻՆՉՊԷՍ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԱՅՍ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐԸ

**Ընդհանրապես** կարող եք այս դիմումնագիրը ձեր փաստաթղթերի հետ անձամբ ներկայացնել կամ ուղարկել որեւէ Սոցիալական Ապահովության գրասենյակ: Մենք ետ կը վերադարձնենք ձեր փաստաթղթերը: Սակայն եթէ ձեր ապրած շրջանում Սոցիալական Ապահովության Քարտի Կեդրոն կայ, դուք ստիպված եք անձամբ այցելել այդ կեդրոնը ձեր Սոցիալական Ապահովության համարի հետ կապ ունեցող լրիւ հարցերի համար: **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Դուք <u>անձնապես</u> ՊԵՏՔ է դիմեք եթե 12 տարեկան եք (կամ ավելի) եւ անցյալում չեք ունեցել Սոցիալական Ապահովության համար:**

**Եթէ որեւէ մի հարց ունեք** այս դիմումնագրի եւ փաստաթղթերի վերաբերյալ, խնդրում ենք կապվեք Սոցիալական Ապահովության որեւէ գրասենյակի հետ: Հեռաձայնով դուք կարող եք իմանալ եթէ ունեք անհրաժեշտ փաստաթղթերը դիմում ներկայացնելու կամ տեղեկություններ փոխելու համար: Ձեր ամենամոտ գրասենյակի հասցեն կարող եք գտնել հեռախոսացանկից կամ մեր կայքէջում <u>www.socialsecurity.gov</u>:

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտ եղած փաստաթղթերը կախյալ են ձեր պահանջած քարտի տեսակից: Չենք կարող ձեր դիմումնագիրը ընդունել առանց ճշգրիտ եւ անհրաժեշտ փաստաթղթերի:

- Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն **ԲՆԱԳԻՐ** կամ **վավերացված այն կազմակերպության կողմից որ զանոնք պարենաւորած է**: Մենք ետ կը վերադարձնենք ձեր փաստաթղթերը:
- **Մենք չենք կարող ընդունել կրկնօրինակներ կամ նոտարի կողմից հաստատված փաստաթեթեր:**

**<u>ԲՆԱԳԻՐ ՔԱՐՏ.</u> Բնա ֆիր քարտ ստանալու համար մենք պետք ունենք առնվազն երկու փաստաթղթեր որոնք ապացույցելու են ձեր տարիքը, ինքնությունը եւ Ամերիկայի Միացյալ Նահան ների քաղաքացիությունը կամ ընթացիկ օրինապես աշխատելու թույլտվության ներ աղթային կար ավիճակը: Եթէ ԱՄՆ քաղաքացի չեք կամ չունեք ընթացիկ օրինապես աշխատելու թույլտվության կար ավիճակ, պետք է ապացույցեք թէ համարի կարիք ունեք աշխատանքի հետ կապ չունեցող պատճառով: (Տեսեք ԻՆՉՊԷՍ ԼՐԱՑՆԵԼ ԱՅՍ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐԸ , 3րդ բացատրություն):**

**ԿՐԿՆՕՐԻՆԱԿ ՔԱՐՏ. Կրկնօրինակ քարտ** ստանալու համար պետք է ձեր **ինքնությունը** հաստատեք: Եթե ծնվել եք ԱՄՆ-ից դուրս, պետք է նաեւ փաստեք ձեր **ԱՄՆ քաղաքացիությունը** կամ ունենաք ընթացիկ **օրինապես աշխատելու թույլտվության կար-ավիճակը:**

Եթե ուզում եք ձեր քարտի տվյալները փոխել կամ սրբագրել (անուն փոխել կամ ծննդյան թվականը շտկել) պետք է հաստատեք **ձեր ինքնությունը եւ ներկայացնեք վկայություններ որոնք արտօնում են այս սրբա-ւումը կամ փոփոխումը (օրինակ, ձեր ծննդյան վկայականը փոխելու ձեր ծննդյան թվականը):** Եթե ծնվել եք **ԱՄՆ-ից դուրս, պետք է նաեւ փաստեք ձեր ԱՄՆ քաղաքացիությունը կամ ունենաք ընթացիկ օրինապես աշխատելու թույլտվության կար-ավիճակը:**

## ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵՐ

Հանրային Օրէնք 108-458 **սահմանափակում է անհատի մը Սոցիալական Ապահովության քարտ** ստանալու քանակը: Մեկ տարվա ընթացքում երեք անգամից աւել եւ ձեր կյանքի ընթացքում 10 քարտից աւել չեք կարող ստանալ: Անունի օրինական փոփոխությունններն ու այլ բացառություններ հաշվի չեն առնվում: Օրինակ, ոչ քաղաքացու կարգավիճակի փոփոխությունները, որոնք պահանջում են քարտի նորոգումը, հաշվի չեն առնվում: Նաեւ, եթե ապացուցեք որ քարտը ձեզ անհրաժեշտ է լուրջ դժվարություն կանխելու համար, դարձեալ կարող եք **սահմանափակ քարտերից աւել ստանալ** (օրինակ, կարող եք մի նամակ ներկայացնել սոցիալական ծառայության կազմակերպություններից որ ձեզնից պահանջում է Սոցիալական Ապահովության քարտը նպաստներ վճարելու համար):

## ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ ԱՅՍ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐԸ

Այս դիմումնագիրը մեծմասամբ ինքնաբացահայտ է: Այն հարցերը որոնք բացատրության կարիք ունեն նշված են ներքեւում: Համարները համապատասխանում են դիմումնագրի վրա նշված հարցերի համարներին: Եթե դուք այս դիմումնագիրը լրացնում եք ուրիշի համար, խնդրում ենք լրացնեք այդ անձի տվյալներու համեմատ:

2. Նշեք այն հասցեն, որտեղ դուք կարող եք ստանալ ձեր քարտը այսօրվանից 10-14 օրվա ընթացքում:

3. Եթե դուք նշեք «Օրինական Օտարերկրյա քաղաքացի **առանց** աշխատանքի իրավունքի», դուք պետք է ներկայացնեք գրավոր նամակ այն դաշնակցային, նահանգային կամ տեղական կառավարական գործակալությունից, որը ձեզանից պահանջում է համարի ստացումը: Այդ գրությունը պետք է բացատրի թէ ի՞նչի համար է ձեզ անհրաժեշտ այդ համարը եւ նշի թե դուք բավարարում եք գործակալության բոլոր պահանջներին, բացի Սոցիալական Ապահովության համար ունենալը: Նահանգի կամ տեղական գործակալության պահանջները երբեմն չեն համապատասխանում դաշնակցային օրէնքների հետ:

   Եթե նշեք «Այլ» կետը, դուք պետք է ապացուցեք ձեր իրավասությունը մի դաշնակցային ծրագրի, որից նպաստներ ստանալու համար պահանջվում է Սոցիալական Ապահովության համարը:

5. Ցեղային եւ ազգային տեղեկություններ տրամադրելը կամավոր է: Սակայն, եթե մեզ տրամադրեք այդ տեղեկությունը, մենք օգտագործելու ենք նա պատրաստելու վիճակագրական զեկուցումներ, ուսումնասիրելու Սոցիալական Ապահովության ծրագիրների ազդեցությունը ժողովուրդի վրա: Մենք անհատների ինքնությունը չենք հայտներ:

6. Նշեք ծննդյան ամիսը, օրը եւ տարվա լրիւ թվականը (4 համարով): Օրինակ՝ «1998» ծննդյան տարվա համար:

8.B. Գրեցեք մօր Սոցիալական Ապահովության համարը միայն եթե դիմում եք 18 տարեկանից ցածր երեխայի **բնա-իր** Սոցիալական Ապահովության քարտը ստանալու համար: Դուք կարող եք այս մասը չլրացնել եթե մայրը չունի համար կամ դուք այդ համարը չգիտեք: Մենք կարող ենք երեխային հատկացնել Սոցիալական Ապահովության համար առանց այս տեղեկության (եթե 18 տարեկանից փոքր է):

9.B. Գրեցեք հօր Սոցիալական Ապահովության համարը միայն եթեէ դիմում եք 18 տարեկանից ցածր երեխայի **բնա-իր** Սոցիալական Ապահովության քարտը ստանալու համար: Դուք կարող եք այս մասը չլրացնել եթե հայրը չունի համար կամ դուք այդ համարը չգիտեք: Մենք կարող ենք երեխային հատկացնել Սոցիալական Ապահովության համար առանց այս տեղեկության (եթե 18 տարեկանից փոքր է):

13. Եթե 6րդ կետում ձեր նշած ծննդյան թվականը տարբեր է ձեր նախկին Սոցիալական Ապահովության դիմումնագրի մեջ նշված ծննդյան թվականից, նշեք այդ հին ծննդյան թվականը այս կետում եւ ներկայացրեք փաստաթղթեր վավերացնելու 6րդ կետում նշված ծննդյան թվականը:

16. Ստորագրեցեք դիմումնագիրը եթե 18 տարեկան եք (կամ աւելի): Եթե 18 տարեկանից երիտասարդ եք դուք կամ ձեր ծնողը (կամ խնամակալը) կարող է բայց մարմնական ու մտային կարողություն ունեք, դարձյալ կարող եք ստորագրել դիմումնագիրը: Եթեէ չեք կարող ձեր անունը ստորագրել, ստորագրության գծի վրա նշանագրեք «X» որու մօտ երկու վկաներ պետք է ստորագրեն: Եթե մարմնական կամ մտային կարողություն չունիք դիմումնագիրը ստորագրելու, ընդհանրապես ծնող, մօտ ազգական, կամ օրինական խնամակալ կարող է դիմումնագիրը ստորագրել: Ավելորդ տեղեկություն մի գրեք ստորագրության մօտ որպէսզի ձեր ստորագրությունը չեղյալ չլինի: Եթե հաւելյալ բացատրության կարիքը ունենաք այս նյութի մասին, կարող եք մեզ հեռախոսել:

## ՊԱՀԱՆՋՎԱԾ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ներքեւ գտնվող ցանկը պարունակում է ձեզնից պահանջված ընդունելի փաստաթղթերի օրինակներ: Այդ լրիւ ցուցակ չի: **Փաստաթղթերը համապատասխանելու են ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ բաժնի մէջ յիշված դատանիշներին:** Եթէ հարցեր ունեք, կամ հաւելյալ փաստաթղթերի մասին տեղեկություն ուզում եք, կարդացեք **եթէ որեւէ մի հարց ունեք** բաժինը: Ընդունելի փաստաթղթերն են.

**<u>ՏԱՐԻՔ.</u>** Մենք նախընտրում ենք տեսնել ձեր ծննդյան վկայականը: Սակայն կարող ենք ընդունել ուրիշ փաստաթղթեր, որի վրա լինում է ձեր ծննդյան թվականը: Ընդունելի փաստաթղթերն են.

- Հիվանդանոցի ծննդյան հաղորդագրություն, որ ստեղծվել է ձեր ծննդյան ժամանակ
- Կրոնական հաղորդագրություն, որի մեջ նշված է ձեր տարիքը եւ պատրաստվել է ձեր ծնունդից 3 ամսվա ընթացքում
- Անձնագիր (passport)
- Որդեգրման փաստաթուղթ (որու մեջ պետք է նշվի թե ծննդյան տվյալները վերցված են ծննդյան բնագիր վկայականից):

Եթե այս փաստաթղթերից որեւ մեկը չունեք, խորհրդատվության համար մեզ հեռաձայնեք:

**<u>ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ.</u>** Դուք պետք է ներկայացնեք մի փաստաթուղթ, որը պարունակում է այն անունը որ ցանկանում եք գրվի ձեր քարտի վրա: Մենք նախնտրում ենք ԱՄՆ մէջ ստեղծված փաստաթղթեր: Այս փաստաթղթերը պետք է պարունակեն ձեր անունն **ՈՒ** կենսական տեղեկությունը (ձեր ծննդյան թվականը, տարիքը, ծնողների անունները), **կամ էլ** ունենան մարմնական նկարագրություն (լուսանկար, լուսանկար եւ մարմնական նկարագրություն՝ ձեր հասակը, մազի ու աչքերի գույնը): Եթէ լուսանկարով փաստաթուղթը ուղարկեք բոստով եւ անձամբ չներկայանաք գրասենյակում, **անհրաժեշտ** է որ այդ փաստաթուղթը պարունակի ձեր կենսական տեղեկությունը (ձեր ծննդյան թվականը, տարիքը եւ ծնողների անունները): Ձեր Սոցիալական Ապահովության քարտն ու համարը պաշտպանելու համար, ձեր ինքնության փաստաթուղթը պետք է վերջերս ստեղծված լինի:

- Վարորդական իրավունք
- Ամուսնության/ամուսնալուծումի արձանագրություն
- Աշխատանքի ինքնության քարտ
- ԱՄՆ Ներգաղթի Կարգավիճակի Վկայականներ
- Զինվորական ինքնության քարտ
- ԱՄՆ նահանգային ինքնության քարտ
- Կյանքի ապահովագրության պայմանագրություն
- Անձնագիր
- Օտարերկրյա ինքնության քարտ
- Դատարանի վճիռ անվան փոփոխմ ան մասին
- Որդեգրման վկայագիր (**միայն** եթէ չենք օգտագործել իբրեւ տարիքի ապացույց)

Երեխաների ինքնությունը փաստելու համար մենք ընդունում ենք բժիշկի, դարմանատան կամ հիվանդանոցի գրանցումը (եթէ այդ հաստատությունների մոտ պահված էին): Մենք նաեւ ընդունում ենք դպրոցի կողմից տրված ինքնությունը հաստատող ուսանողական քարտ եւ դպրոցական վկայագիր:

**ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԸՆԴՈՒՆԵԼ ՀԵՏԵՒՅԱԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԻԲՐԵՒ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑ՝ ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ, ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՀՈՒՇԱՆՎԵՐ ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ ԿԱՄ ՔԱՐՏԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԸ, ԿԱՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄՕՏ ԵՂԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:**

**ԿԱՐԵՒՈՐ. Եթե դիմում ներկայացնում եք ուրիշ մի անհատի համար, պետք է մեզ ներկայացնեք փաստաթուղթ ապացույցելու ձեր լիազորությունը ստորա դրելու այս դիմումնա իրը Սոցիալական Ապահովության համար պահանջողի փոխարեն:** Պետք է հաստատեք **նաեւ** ձեր ինքնությունը ներկայացնելով ձեր եւ համար պահանջողի ինքնության փաստաթղթերը:

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ.** Մեծամասնությամբ մենք ընդունում ենք որեւէ փաստաթուղթ, որ ցույց տալիս է ձեր ծնունդը Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Եթէ դուք Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի եք բայց ծնվել եք ԱՄՆ- ից դուրս, կարող եք ներկայացնել ԱՄՆի մերիկայի Միացեալ Նահանգների հյուպատոսարանի կողմից տրված ծննդյան վերաբերող փաստաթղթեր, Ամերիկայի Միացյալ Նահանգների անձնագիր, քաղաքականության կամ հպատակության վկայական:

**ՆԵՐԳԱՂԹԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ.** Պետք է ներկայացնեք ժամկետը չվերջացած մի փաստաթուղթ, որը ձեզ տրվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայրենիքի Ապահովության Գրասենյակի (DHS) կողմից, օրինակ՝ I-551, I-94, I-688B կամ I-766: Մենք ՉԵՆՔ ընդունում դիմումնագրի ստացական, որը հաստատում է թե դուք դիմել եք տվյալ փաստաթղթերի համար: Եթե Ամերիկայի Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվություն չունեք, կարող եք Սոցիալական Ապահովության համար ստանալ եթե օրինավոր կերպով գտնվում եք Միացեալ Նահանգներում, եւ կարիք ունեք համարի աշխատանքի հետ կապ չունեցող պատճառավ: (Տեսեք՝ ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ ԱՅՍ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐԸ 3րդ կետը:) Ձեր քարտը կը նշանագրվի «ՎԱՎԵՐԱԿԱՆ ՉԷ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ»: Եթէ աշխատեք, մենք Հայրենիքի Ապահովության Գրասենյակին կտեղեկացնենք:

# ԹՂԹԱՅԻՆ/ԳԱՂՏՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՒ ՁԵՐ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐԸ

1974 թվականի Գաղտնապահության Որոշումը մեզ պարտադրում է, որ մենք յուրաքանչյուր անձի ներկայացնենք հետեւյալ յայտարարությունը երբ Սոցիալական Ապահովության համարի դիմում է ներկայացվում:

Սոցիալական Ապահովության Օրէնքի 205(c) եւ 702 բաժինները մեզ իրավունք են տալիս, որ այս դիմումնագրում պահանջվող տեղեկությունները հավաքենք:

Մենք օգտագործում ենք այն տեղեկությունը, որ դուք դիմումնագրում ներկայացնում եք, ձեզ Սոցիալական Ապահովության Քարտ հատկացնելու համար: Դուք պարտավոր չեք այս տեղեկությունները մեզ ներկայացնելու, սակայն, առանց նրանց մենք չենք կարող ձեզ Սոցիալական Ապահովության համար կամ քարտ հատկացնենլ: Առանց Սոցիալական Ապահովության համարի, չեք կարող աշխատել եւ կը կորսնցնեք ձեր ապագայում ստանալիք Սոցիալական Ապահովության նպաստները

Սոցիալական Ապահովության համարը նույնպես օգտագործվում է Ներքին Հարկային Վարչության կողմից ձեր տարեկան հարկերու հարցով, ինչպես նաեւ այն անհատների համար որոնք ձեր տարեկան դաշնակցային եկամուտի հայտարարագրման մէջ խնամքի տակ գտնվող արձանագրում եք:

Եթե կարիք լինի, որ տեղեկությունները հայտնաբերենք Սոցիալական Ապահովության ծառայությունների ծրագրերին, ներառյալ համապատասխան օրէնքը հարկադրող գործակալություններին կառավարելու հատկացրած իրավունքները, առողջապահական, եւ բարեկեցության ծրագրերը որոնք են Մէտիքէր եւ Մէտիքէյտ, զինվորական նպաստներ եւ հանգստաթոշակը, քաղաքացիական ծառայության տարեվճարները, սեւ թոք (black lung), բնակեցության, աշակերտական փոխառնություններ, երկաթուղիի հանգստաթոշակներ, եւ պարենային կտրոններ, ուղարկել Ներքին Հարկային Վարչության, գործատերերին եւ նախքին գործատերերին, որպեսզի ճշգրիտ կերպով պատրաստեն աշխատավարձի հարցարանները: Մենք նույնպես կարելի է, որ ըստ դաշնակցային օրէնքների, տեղեկությունները հայտնաբերենք Հայրենիքի Ապահովության Գրասենյակի, Ամերիկայի Միացյալ Նահանգներում օտարերկրացիների ինքնությունը հաստատելու եւ նրանց տեղակայելու նպատակով, Ընտրողական Ծառայության Համակարգին զորակոչման արձանագրության համար, եւ Առողջապահության ու Մարդկային Ծառայությունների Բաժանմունքին երեխաների պաշտպանության հարկադրության նպատակով: Կարելի է, որ Նահանգի ինքնաշարժի գործակալության համար Սոցիալական Ապահովության համարները ստուգենք, որպեսզի օգտագործեն վարորդական վկայականը հայթայթելու համար, ինչպես արտօնված է Սոցիալական Ապահովության օրէնքների համեմատ: Վերջապես, կարելի է, որ տեղեկությունները տրամադրենք ձեր երեսփոխանների եւ ծերակուտականների ներկայացուցիչներին, եթէ նրանք տեղեկությունները պահանջեն պատասխանելու այն հարցերը որոնք դուք հարցրել եք նրանց:

Անհատների տվյալները արդիական միջոցով համապատասխանում ենք դաշնակցային, նահանգային, եւ տեղական վարչությունների հետ, վստահելու որ իրենք իրավասցու են դաշնակցային կառավարության կողմից նպաստներ ստանալու: Օրէնքը մեզ իրավունք է տալիս որ այս կատարենք, նոյնիսկ եթե դուք մեզ հետ համաձայն չլինեք:

Սոցիալական Ապահովության գրասենյակում կան այս բացատրությունների եւ օրէնքների օրինակները: Եթէ ցանկանում եք ստանալ հաւելյալ տեղեկություն, կապվեք որեւէ Սոցիալական Ապահովության գրասենյակի հետ:

Տեղեկությունների այս հավաքումը համապատասխանում է 44 U.S.C. «3507-ի հետ, ինչպես բարեփոխված է <u>1995 Թղթային Գաղտնապահության Որոշման երկրորդ բաժնի</u>: Դուք կարող եք չպատասխանել այս հարցերին, եթե մենք չցուցաբերենք Office and Management and Budget-ի ղեկավարման թիվը: Մենք ենթադրում ենք, որ 8.5 մինչեւ 9 րոպե կտեւի այս ուղղությունները կարդալը, հավաքել կարեւոր տեղեկությունները, եւ հարցերին պատասխանելը: **ԼՐԱՑՐԱԾ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐԸ ԵՒ ՈՒՂԱՐԿԵՔ ՁԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ: Ձեր հեռախոսացանկի մեջ կարելի է գտնել հասցեն Ամերիկայի Միացեալ Նահանգների կառավարական գրասենյակների ցանկում, կամ էլ կարող եք հեռաձայնել Սոցիալական Ապահովության գրասենյակ 1-800-772-1213 հեռախոսահամարով:** *Մեր կրահած ժամանակի վերաբերյալ կարող եք ձեր մեկնաբանությունները ուղարկել հետեւյալ հասցեով. SSA, 1338 Annex Building, Baltimore, MD 21235-0001:* ***Ուղարկեք <u>միայն</u> մեր կրահած ժամանակի վերաբերյալ կարծիքները այս հասցեով եւ ոչ ձեր լրացված դիմումնագիրը:***